ՅԱՌԱՋԴԻՄՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Կէս դարից անց է ինչ Կովկասեան հայերը սկսել են իրանց մտաւոր զարգացման համար դիմել եւրոպական ուսման, ռուսաց թէ արտասահմանի միջնակարգ թէ բարձրագոյն դպրոցների միջոցով. երեսուն տարուց աւելի է որ Կովկասեան հայերը հիմնել են եւրոպական նախատիպարով պարբերական մամուլը. մօտ երեսուն տարի է, որ արծարծւել է ու ապա մի յայտնի բայց զգալի չափով իրագործւել է տղայոց տարրական ուսումնարանների խնդիրը. քառորդ դար է ինչ պատաստւել է մեզանում գիւղերի թէ քաղաքների ամբոխի աղջկերանց կրթութեան գործը օրիորդաց տարրական ուսումնարանների միջոցով. քառորդ դարուց անց է ինչ թատրոնական գործն սկսւել է մեզանում։ Եւ միայն մօտ ժամանակների գործ է, որ սկսւել է գրականութեան, մանաւանդ թարգմանական և անչափահասների համար նշանակւած գրականութեան փոքրիկ բայց և այնպէս նկատելի ծաղկումը և ժողովրդական գրադարանների հիմնարկութիւնը։

Ահա՛ բոլորը, ինչ հայերը Կովկասում կարողացել են ձեռնարկել մտաւոր և քաղաքակրթական ասպարիզի վերայ, տարբեր յաջողութեամբ հեռուանքների կողմից։ Բարձրագոյն ուսումը Կովկասեան հայերին տւել է ամենամեծ մասամբ եկամուտի միջոցներ այնպիսի զբաղմունքներից, որոնք կապւած են դիպլոմի հետ՝ փաստաբաններ, բժիշկներ, ինժեներներ, տեխնիկոսներ, պետական վարչական պաշտօնեաներ և այլն և մի փոքր շատ փոքր թւով գիտնականներ, ժուրնալիստներ, ուսուցիչներ ու այլ և այլ հոգեւորականներ. գիւղական ուսումնարանները մի փոքր գրագիտութիւն են տարածել գիւղական ամբոխի մէջ։ Պարբերական մամուլը ընթերցող հասարակութեան շրջանն է ընդլայնացրել և կեանքի է կոչել մի քանի թւով հրապարակախօսական և վիպասանական ոյժեր։ Աղջկերանց ուսումնարանները տեղ-տեղ ընթերցողներ են պատրաստել կանանց շրջաններում, որոնք թոյլ կերպով հետևում են մեր մամուլին և մանաւանդ վիպական գրականութեան. թատրոնական գործը ստեղ-

ծել է մի քանի ինքնուրոյն բեմական յաջող գրուածքներ և ոչ բազմաթիւ թատրոնական թարգմանութիւններ, նա ծանօթացրել է ամբոխին թատրոնական ներկայացումների հետ և կեանքի կոչել մի քանի բեմական գործիչներ և դերասաններ։ Ինչ վերաբերում է գրականութեան՝ նա առ այժմ գրեթէ միայն կազմած է ինքնուրոյն և թարգմանական վէպերից և պատմուածքներից, քիչ թւով նաև կլասիկների հեղինակութիւնների փոխադրութիւններից, մանկավարժական և ժողովրդացրած գիտական գրուածներից։

Այս է, կարծում ենք, հաշուեկշիռը Կովկասեան հայերի զարգացման պատմութեան ներկայ դարում։ Անշուշտ գործ կատարուած է։ Բայց ակներև է որ մեր յիշած գործքերից և ոչ մէկը չի հասել իւր բարձր զարգացման։ Բարձրագոյն ուսումը գլխաւորապէս կարիերիստներ և եկամուտների ագահ մարդիկ պատրաստեց, բայց շատ և շատ քիչ մարդիկ ընծայեց հասարակութեան։ Ապացոյցների կարօտ չէ այդ, դա արդէն փաստ է։ Զափազանց քիչ մարդիկ գտնուեցան նոցա միջից, որոնք իրանց մասնագիտութիւնների հետ կապէին ժողովրդին և կամ գիտութեան ծառայելու ձգտումը։ Այդ պատճառով այդ գործնական մասնագիտութիւնների տէր մարդկանց դասակարգը չը կարողացաւ նուաճել ընդհանուր ժողովրդական համակրութիւնը և բարոյական բարձր հեղինակութիւն ձեռք բերել ժողովրդի վերայ։ Ժողովրդական շահերին ծառայող հասարակական այլ և այլ հիմնարկութիւններ ևս շահ չունեցան այդ դասակարգի նոյն իսկ նիւթական համեմատապէս առատ միջոցներից. ներկայումս այդ դիպլոմաւոր դասակարգն է որ ամենից գձուծն է հանդիսանում ամեն տեղ ուր հասարակական որ և է գործին նուիրաբերութիւն է հարկաւորւում։ Այն ուսումը որ ստացել են Կովկասեան հայերը այն տեսակիցը չէ, որ բարոյապէս ազդէր ոգու վերայ, նրան նաև ոգեկան լաւ ուղղութիւն տար. այդ ուսումը նաև այն տեսակիցը չէ որ ոգի ներշնչէր անհոգի դրամին։ Առ այժմ ուրեմն հաստատ է որ դիպլոմը բարերարութիւն չը բերաւ ժողովրդին, եւ եթէ պարզ է որ այդ դրութիւնը այդպէս շարունակել կարող չէ—ահա՛ մի խնդիր, որը հասարակութեան ուշադրութեանն ենք առաջարկում։

Մեր ներքին և հասարակական գործերի յառաջդիմութիւնը սակայն կախուած չէ միայն բարձր ինտելիգենտ դասակարգից, թէև նորանից անկախ չէ նաև մեր գործերի յառաջդիմութեան մեծ դանդաղկոտութիւնը։

Մի թեթևակնարկով տեսնենք ուրեմն թէ ինչպէս է ազդել զարուս ոդին այլ դասակարգերի վերայ և թէ ինչ ուշադրութեան արժանի կերպարանափոխութիւններ են ենթարկուել նոքա։ Գիւղական դասակարգի համար չափազանց քիչ բան է արուած. միակ նորմուծութիւնը նորա համար՝ տարրական կանոնաւոր ուսումնարանն է, որ այն էլ դեռ ևս հեռաւորագոյն անգամ ամեն տեղ չը կայ։ Այդ պատճառով նրան դեռ ևս գրեթէ անմատչելի է գրականութիւնը՝ ինչ ձևով էլ նա ներկայացնի նրան։ Հաղորդակցութեան ճանապարհներ թէև կան շինուած մեր երկրում, բայց շատ հեռու չի տարուած գործը։ Գիւղական բժշկութիւնը դեռ ևս լուծելու խնդիր է մնում. գաւառական բժիշկները աւելի դատաստանական ագենտների դեր են կատարում, քան հիւանդութիւններ բժշկողների դեր, իսկ գիւղական բժիշկներ և դեղատուններ մեր բաւականի ընդարձակ երկրի միայն փոքրաթիւ տեղերում են հաստատուած։ Իսկ հին, տեղական հիւանդութիւնների վերայ ժամանակը բերել է նոր հիւանդութիւններ, որոնց դէմ մարտնչելը ժողովուրդը միանգամայն անզօր է։

Վեներական հիւանդութիւնները զարհուրելի չափերով վարակել են և շարունակում են վարակել մեր գաւառները, այլասերելով և հիւանդոտ դարձնելով ներկայիս մատաղ սերունդները։ Եւ տեսէք թէ որքան քիչ է զբաղեցնում մի այդպիսի խնդիր մեր հասարակութեանը, որ ոչ միայն դորա դէմ զօրեղ միջոցների չեն դիմում, այլ նոյն իսկ մեր պարբերական մամուլի մէջ չը կայ մի հատիկ հետազօտական յօդուած այդ խնդրին վերաբերեալ։ Չի գտնուել մասնագէտ բժիշկներից մէկը, որ խելքի եկած լիներ՝ մեր գաւառական այլ և այլ բժիշկների պաշտօնական տեղեկութիւնների հիման վերայ մի ընդհանուր տեսութիւն տալու մեր գաւառների ժողովուրդը կոտորող այլ և այլ հիւանդութիւնների մասին և կամ գոնէ իւր սեպհական պրակտիկայից տեղեկութիւններ հասցնելու ընթերցող հասարակութեան գիտութեանը։ Այդպիսի մի գործ նոքա համարում

են դրականութիւն, որից նոքա խորշում են որպէս թուրքը խոզի մսից, բայց համարում են համալսարանների ծնունդներ...

Գիւղական աղգաբնակութեան նիւթական բարեկեցութեան և յառաջդիմութեան համար մինչ այժմ ամենաշոշափելի գործը թերևս պէտք է համարել՝ հաղորդակցութեան միջոցների զարգացումը մեր երկրում՝ շոսէները երկրիս մեծ տրակտների վերայ և Բաթումի-Բաքուեան երկաթուղին։ Բայց ահա ինչ հանգամանքներ կան։ Կովկասի արևմտեան մասը դրուած է աննպաստ դրութեան մէջ համեմատուած արևելեան Կովկասի հետ, որովհետև առաջինը զրկուած է այն բարիքներից, որ տալիս է երկրորդին արդէն տասը տարի գոյութիւն ունեցող երկաթուղին։ Երևանեան մեծ նահանգը, Կարսի շրջանը և երկաթուղուց հեռու գտնուող Ղարաբաղի մանաւանդ լեռնային գաւառները այդպիսով դրուած են աննպաստ դրութեան մէջ։ Դա մի հանգամանք է, որ շատ ընդհանուր շտհեր է շոշափում, որպէս զի խելացի լինի աւելի ևս յեռաձգել Երևանեան երկաթուղու շինելու խնդիրը։

Բայց նոյն իսկ երկաթուղին բարիք է միայն երբ արդիւնաբերութիւնը դորանից օգտւում է։ Արդ՝ գիւղական դասակարգի երկրագործ մասը, հողի զգալի սակաւութեան պատճառով, չի օգտւում այդ բարիքից որպէս պէտք է։ Այգեռէրերն էլ, գոյութիւն ունեցող բարդ և մեր երկրի հանգամանքներին անհամապատասխան ակցիզային սիստեմի պատճառով, փոխանակ հարստանալու, շատ և շատ տեղ ուղղակի աղքատանում են։

Մենք յոյս ունենք այս տարւայ ընթացքում «Մուրճ»-ի մէջ պարզել այդ խնդիրները աւելի քան կարողացած ենք մինչ այժմ. բայց միայն այս առ այժմ հաստատ է, որ գիւղական երկրագործ ազգաբնակութիւնը դեռ ևս շարունակում է մնալ առանց զորաւոր օրգանների իւր անմիջական շահերը պաշտպանելու համար։ Այդպիսի մի զօրեղ օրգան ստեղծելու անհրաժեշտութիւնը մեզ համար միանգամայն ակներև է, և մենք կարծում ենք միևնոյն ժամանակ, որ մի այդպիսի զօրեղ օրգան մեր երկրում, որպէս նաև կայսերութեան շատ ուրիշ նահանգներում, չի կարող լինել ոչ մի ուրիշ բան, քան զեմստւոների հաստատութիւնը մեր երկրում, Ռուսաստանի նահանգներից երեսն ու չորսում գործող զեմստւոների ձևով։ Ինչպէս որ մեր

քաղաքները ուրիշ կերպ բարեկարգել անհնարին է քան քաղաքային ինքնավարութիւնով, որ արդէն մուցուած է Կովկասի քաղաքներից կարևորագոյններում, նմանապէս գիւղական համայնքները իրանց ընդհանուր շահերը հազիւ թէ կարողանան այնպէս պաշտպանել, որպէս այդ կարող էին անել գաւառական զեմստվոները։ Ռուսաստանի օրինակը այդ կողմից միանգամայն խրախուսիչ է. «Մուրճ»-ի ընթերցողները դորանում կարող են համոզուել կարդալով «Նամակներ Ռուսաստանից» վերնագրով յօդուածները։ Զեմստուային հաստատութիւնը կը ներշնչէ գիւղական ազգաբնակութեանը մի քաղաքացիական ոգի, որ ոստիկանական կառավարչութիւնը երբէք չի կարող անել ամենահեռաւոր չափովն անգամ, որպէս այդ ամենալաւ կերպով ապացուցում է թէ Ռուսաստանի օրինակը և թէ նաև մեզանում գործող քաղաքային ինքնավարութիւնը։ Իսկ քաղաքացիական ոգին իւր հետ կը բերէ անթիւ-անհամար ուրիշ բարիքներ երկրիս համար։ Երկրիս գիւղական ազգաբնակութեան շահերը շատ հանգամանքներում պահանջում են, որ ոչ թէ ամէն մի գիւղ ու համայնք իւր համար գործէ, այլ որ շատ համայնքներ միասին գործեն և ընդհանուր ոյժերով, ընդհանուր օժանդակութեամբ գործին նպաստեն. իսկ գորա համար հարկաւոր է նոցա մէջ մի ընդհանուր կապ, որ չը կայ այսօր, բայց որը կը լինի՝ եթէ զեմստուների նման հաստատութիւն լինի։ Այդ կը լինի մի ահագին բարիք երկրիս գիւղական ազգաբնակութեան համար, բայց հարկաւոր է որ ազգաբնակութիւնը ինքը արժանի կացուցանէ իրան մի այդպիսի բարերարութեան բարձր կառավարութեան կողմից՝ կառավարութեան, որը բարերարել է այս երկիրը մի քանի շատ կարևոր ռեֆորմներով, որոնց մէջ յիշենք միայն նահանգական և գաւառական հաստատութիւնները, գիւղացիներին ազատելը թէ ճորտութիւնից, ուր սա կար և թէ կալուածատէրերի իրաւասութիւնից, ուր ճորտութիւն չը կար, ներմուծումը դատաստանական նոր կարգ ու կանոնների և քաղաքային ինքնավարութեան երկրիս կարևորագոյն քաղաքներում։

Զեմստուային հիմնարկութիւնների ներմուծումը մեր երկրում շատ նշանաւոր չափով կը լուծէ նաև տեղական ինտելիգենցիայի ոյժերը արդիւնաւէտ կերպով գործադրելու և ժողովրդին ծառայեց-

նելու խնդիրը, որը մեզ զբաղեցրել է արդէն մի անգամ «ժողովուրդը որպէս քաղաքակրթական ոյժ» յօդուածում («Մուրճ» 1890 № 11)։

Իսկ առայժմ մեզ մնում է միայն վկայել, որ մեր գիւղական ազգաբնակութիւնը դեռ ևս իւր կաշին չի փոխել և որ թէ մտաւորականի և թէ տնտեսականի նկատմամբ դեռ ևս գրեթէ ամէն ինչ մնում է անել։

Մեր ժողովրդական միւս խաւերից մնում են արհեստաւոր և վաճառական դասակարգերը։ Դոքա այն դասակարգերն են, որ ամենից շատ պէտք է ազդէին այն շփումից եւրոպակիրթ ազգերի հետ, որ նորագոյն դարը անհրաժեշտաբար յառաջացրել է մեր ժողովրդի համար։ Գիւղական կեանքը չ՝ազդեց մեր երկիրը գաղթած ոչ գերմանացի և ոչ ռուս գաղթական շինականներից. բայց արհեստները և վաճառականութիւնը, քաղաքներում կենդրոնացած լինելով, ուր կեանքը աւելի շարժուն է և յարաբերութիւնները իրար հետ սերտ կցած, չէին կարող չը կրել մեր երկրում հաստատուած եւրոպական արհեստաւորների, վաճառականների և գործարանատէրերի ազդեցութիւնը։ Քաղաքային բնակիչների եւրոպական նիստուկացը, մոդայի ներմուծումը մեր երկրում, քաղաքային շինութիւնների արխիտեքտուրայի փոփոխութիւնը և մի քանի արդիւնաբերութիւնների մեծ կապիտալով շահագործելը,—այս բոլորը տեղ տուեց եւրոպական արհեստաւորների հաստատուելուն մեր երկրի գլխաւոր քաղաքներում, գլխաւորապէս Թիֆլիսում և Բաքուում։ Տեղական արհեստաւոր դասակարգը ժամանակով ազդուեց այդ փոփոխութիւններից, բայց ոչ ընդհանուր կերպով, որովհետև և կեանքը ամենուրէք հաւասարապէս չը կերպարանափոխուեց, այլ միայն մասամբ և միայն տեղ-տեղ։ Արհեստաւոր դասակարգը այսպիսով բաժանուեց երկուսի՝ մի մասը և մեծագոյնը շարունակեց իւր հին արհեստը հին ձևով, միւս մասը և փոքրագոյնը հետևեց եւրոպական արհեստին։ Ապագան վերջինին պատկանելով՝ այդ դասակարգը քանի գնում՝ այնքան աճում է։

Բայց տես՝ և մի հանգամանք։ Արհեստաւորների հին ձևով շարունակողները իրանց արհեստի բոլոր աղբիւրը համարում են

աւանդութիւնը, ուրեմն և աւանդական աշկերտութիւնը։ Ոչ մի շփումն ուրեմն դպրոցի և գրականութեան հետ։ Նորագոյն արհեստաւորների սերունդը կրթուել է և կրթւում է գլխաւորապէս եւրոպացիների արհեստանոցներում՝ մեր երկրում թէ արտասահմանում կամ Ռուսիայում։ Երկին ոչ մի շփումն դպրոցի և գրականութեան հետ։

Ինչ է ներկայացնում վաճառական դասակարգը և ինչ ուղղութեամբ ազդեց մեր դարը այդ դասակարգի վերայ։ Մենք պատմութիւն չենք անում, այլ ուզում ենք նկատելի դրութիւնը և յոսանքները վկայել և որոշել այն կէտերը, որոնք ըստ մեզ յառաջադիմութեան նշաններ կարելի է համարել և դէպի որս մեր ընթերցողների ուշադրութիւնը պէտք է լարուած մնայ։

Վաճառական դասակարգը մանաւանդ վերջին դարերում և մասամբ դեռ մինչ մեր օրերը բռնած էր ազգի մէջ այն գիրքը, որ շատ ուրիշ երկրներում բռնած էր կալուածատէր դասակարգը։ Իւր նիւթական կարողութիւնով նա ձեռք էր բերել մի նշանակութիւն հասարակաց գործերի մէջ, որի շնորհիւ նրան մի տեսակ պատուաւոր տեղն էր յատկացրուած։ Հասարակական կեանքի մէջ այսպէս ասած՝ տոն տուողը այդ դասակարգն էր. և ամեն հասարակական գործում հարուստների, որ ասել է վաճառականների խելք կտրելու չափը վճռողական էր։

Պէտք է սակայն ասած, որ վաճառականական դասակարգը այնու ամենայնիւ չէր կարողացել տիրապէս իշխել ոչ թէ հասարակական, այլ ազգային բարձր խնդիրների դէպքերում. այդ դասակարգից վեր եղած են պետական բարձր պաշտօնեաներ, ազնուական և ոչ ազնուական բայց մեծ տոհմեր, որոնք աւելի անմիջական դեր են կատարել այդպիսի դէպքերում։ Բայց սովորական հասարակաց կեանքի մէջ, հասարակական խնդիրներում, հասարակական հիմնարկութիւններում՝ վաճառականական դասակարգին պատկանում էր գլխաւոր դերը։ Այդ դասակարգը մինչ օրս էլ իւր այդ նշանակութիւնը չի կորցրել, թէև այդ կողմից նա տուժած է եղել զիջել իւր դիրքի մի մեծ մասը եւրոպակիրթ սերունդին՝ ուսումնական ինտելիգենցիային։ Բայց և այսօր, որպէս երկիկ՝ նա մեծ տեղ

ունի գրաւած հասարակաց գործակատարութեան մէջ. դպրոց, ընկերութիւններ, մամուլ, թատրոն և այլ հասարակաց գործեր, ամէն տեղ նոքա դեր են խաղացել և դեր ունին կատարելու և այն՝ շատ շոշափելի չափով։ Եւ արդէն այդ տեսակէտը բաւական է, որ այդ դասակարգը արժանանայ մեր խորին ուշադրութեան։

Ժամանակը այդ դասակարգի վերայ ազդեց նախ այն մտքով, որ նորա որդիքն էին՝ գլխաւորապէս, որ աւելի ապահով քան միւս դասակարգերը, ուսումնարանական և բարձրագոյն կրթութեան ճանապարհը բռնելու կարելիութիւնը ստացան։ Ներկայիս հայ ինտելիգենցիան սերում է գլխաւորապէս վաճառական դասակարգից։ Առաջինը ժաւանգել է երկրորդի բարեմասնութիւններից և պակասութիւններից շատերը։ Բնական է որ այսպէս ասած՝ ազգակցական կապ ունենալով քաղաքակիրթ սերունդների հետ՝ նա պէտք է կրէր նաև նոր սերնդի ազդեցութիւնը շատ անմիջական կերպով։ Այդ հանգամանքը բնականապէս երկու հետևանք ունեցաւ. մէկը այն էր, որ վաճառական դասակարգը որպէս թիւ, որպէս բազմութիւն՝ նուազեց յօգուտ ուսումնական դասակարգի, իսկ միւսը այն էր, որ նոյն իսկ վաճառականութիւնը ինքը սկսեց ընդունել իւր շարքերի մէջ ուսում ստացած մարդիկ։ Բայց այդ գործում առաջինը շատ աւելի արագութեամբ առաջ գնաց քան երկրորդը. և դորա շնորհիւն է որ վաճառական դասակարգը, որպէս դասակարգ, նոյն իսկ մեր դարում իւր կրթական ցենզով մնաց գրեթէ նոյնը, ինչ էր առաջ. նա իւր կաշին զգալի կերպով չը փոխեց։ Դորա հետևանքներից մէկը այն էր, որ վաճառականութեան մի քանի ճիւղերը, գլխաւորապէս խանութային վաճառականութիւնը երկրի ամենագլխաւոր քաղաքներում մասամբ ընկաւ օտարների ձեռքը, բոլորովին այնպէս, ինչպէս այդ աւելի և զգալի կերպով պատահեց արհեստների մէջ։ Դոքա այն ճիւղերն են, որոնց ստեղծողը հէնց եւրոպական կեանքն էր և որոնք ներմուծեցին Եւրոպայից՝ մեքենայավաճառութիւն, ծաղկավաճառութիւն, օծանելիների, եւրոպական մոդայի առարկաների, պատրաստի շորեղէնների վաճառականութիւն և այլն, առևտրական ճիւղեր, որոնց մէջ տեղացիք դեռ մինչ այսօր աշակերտում են օտարների մօտ։

Բայց դեռ և վաճառականութիւնը բոլոր այն առարկաների,

որոնք ամբոխի համար են նշանակուած և կամ որոնց մատակարարողը կովկասեան աղգերի և ժողովրդական մեծ խաւերի արդիւնաբերութիւնն է՝ դեռ ևս մեծ մասամբ տեղացիների ձեռքումն է և շարունակւում է հին ձևով։

Մեր վաճառական դասակարգը, ենթարկւելով դարուս ընթացքում այն կերպարանափոխութիւններին, որ մենք յիշատակեցինք վերև, դրւեց նաև ժամանակի այլ պահանջների առաջ. դա՝ տեղական մեծ արդիւնաբերութեան պահանջներն են, որոնք մեծ կապիտալ են պահանջում։ Դարուս ոգին այդ նկատմամբ անողոք էր, թէև մեր հին վաճառական դասակարգը իւր օգտին գրաւելու համար՝ շատ ժամանակ պահանջեց և գեռ երկար տարիներ կը պահանջի, մինչև որ այդ ոգին լայն ծաւալով սփռւի երկրիս վերայ։ Հանգամանքը այս է, որ մեր երկրի բնական հարստութիւնները շահագործելու համար, շնորհիւ երկրիս մէջ մտցրած աւելի կանոնաւոր վարչութեան, ստեղծւեցին ձեռնտու պայմաններ, որոնցից օգտւելու համար հարկաւոր էր և գիտութիւն և կապիտալ։ Արդ, կապիտալը մեր երկրում միմիայն վաճառականների մօտ էր, վաճառականներ, որոնք առնել և ծախելու մէջ էին տեսնում իրանց միակ կոչումը։

Արդիւնաբերական ասպարէզը այն ասպարէզն էր, ուր կարող էին միանալ հնաւանդ վաճառականները իրանց որդկերանց հետ, որոնք բարձրագոյն տեխնիկական ուսում էին ստացել՝ մէկը տալով իւր կապիտալը, միւսը՝ գիտութիւնը։ Բայց այդ համերաշխութիւնը չը կատարւեց շուտով, որովհետև առաջինները շատ էին ամուր իրանց հայեացքների մէջ, իսկ երկրորդները՝ շատ էին անփորձ։ Այդ իսկ պատճառով մեծ ասպարէզը բացեցին և շարունակեցին եկւորները՝ եկւոր կապիտալիստ և եկւոր տեխնիկոս մարդիկ։ Բայց ժամանակը, մանաւանդ շահաւէտութեան ակներև լինելը մասամբ յաջողեցին կոտրել հնաւանդների կամակորութիւնը և ահա հայ վաճառական կապիտալիստը մասամբ համոզւեց դառնալ արդիւնաբերող-կապիտալիստ կամ վաճառական-արդիւնաբերող։ Ներկայ րոպէիս մենք ականատես ենք այդ կերպարանափոխութեան՝ այսինքն վաճառականական կապիտալի հոսանքին առևտրականութիւնից դէպի արդիւնաբերութիւնը։ Դա ցանկալի հոսանք է և մենք յոյս ունինք թէ ներկայ թւականին «Մուրճ»-ը կարող կը լինի յօդուածներ տալ այդ

ինդրի վերաբերմամբ, ներկայացնելով երկրիս գործարանական արդիւնաբերութեան փաստային կողմը։ Ցամենայն դէպս կարելի է ասել որ նաև այդ գործում յառաջդիմութեան պայմաններ ստեղծուած են, թէև հոսանքը դեռ. ևս թոյլ է։

Մենք կ'ուզէինք այս ընդհանուր տեսութեան մէջ մեր յառաջդիմական պայմանների մասին մի պահ ևս կանգ առնել կանանց սեռի վերայ, որին շատ կարևոր դեր է վերապահուած մեր յառաջդիմութեան գործում. բայց մեր այս յօդուածի տեղը չափուած է և ստիպուած բաց ենք թողնում այդ կարևոր առարկան։

ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆՅԱՆՑ։